


ԾՆՆԴԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՕՐՈՒԱՆ ԱՂՕԹԻ

Ամենակա՛լ Աստուած, արարիչ եւ պահողը բոլոր արարածներուն: Դուն, որ քու օրհնեալ կամփոփ սփանչելի կերպով ստեղծեցիր ու կազմեցիր զիս եւ քու մեծ նախախնամութեամբդ պահեցիր զիս ծննդեան օրէն մինչեւ այսօր, բաւարարելով իմ բոլոր պէտքերս: Կ'օրհնեմ եւ կը փառաւորեմ քու անբաւ գթութիւնդ, երկնաւոր Հայր, եւ շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի: Երկարե՛ իմ կեանքիս ժամանակը, որպէսզի դառնամ իմ գործած յանցանքներէս, եւ իմ կեանքիս մնացեալ օրերը անցնեմ բարեգործութեամբ եւ քու պատուիրաններուդ համաձայն, աստուածահաճոյ եւ զգաստ կենցաղով ու բարեպաշտութեամբ, քո՛ւ փառքիդ համար, որպէսզի իմ հոգիս փրկուի, իմ ծնողներս միօրեարուին եւ եղբայրներս ու բոլոր ընկերներս ուրախանան եւ օգտուին: Եւ ինչպէս, որ քու սփանչեալգործութեամբդ այս օրը զիս մօրս արգանդէն հանեցիր՝ որպէսզի ժամանակաւոր կերպով այս աշխարհի վրայ ապրիմ, նոյնպէս ալ վերջին օրը զիս երկրի արգանդէն հանե՛ որպէսզի անմահական եւ յաւիտենական կեանքով ապրիմ քու արքայութեանդ մէջ, քու յոյսիդ շնորհքով, որովհետեւ դո՛ւն ես իմ Տէրս եւ Աստուածս, ո՛վ իմ փրկիչս եւ ապաւնս, քու շնորհքիդ օգնութեան ապաւինած կը մնամ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՅՏԱՆՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Հաւատալով կը ճաշակեմ սուրբ, կենդանարար եւ փրկարար Մարմինդ, ո՛վ Քրիստոս, իմ Աստուածս, մեղքերուս թողութեան համար»:

Ապա ըմպելով սրբարար Արիւնը, կ'ըսէ. «Հաւատալով կը խմեմ սրբարար եւ մաքրող քու Արիւնդ, ո՛վ Քրիստոս Յիսուս, իմ Աստուածս, մեղքերու թողութեան համար»:

Պայծառացեալ հոգիով եւ անխառն գոհունակութեամբ պատարագիչ քահանան, որպէս երախտագիտութիւն իր աղերսանքը կը ներկայացնէ Պատարագեալ Աստուածորդոյն, ըսելով.- «Անապական մարմինդ թող կեանք դառնայ ինձի համար, եւ սուրբ Արիւնդ՝ քաւութիւն եւ թողութիւն իմ մեղքերուս»:

Վարագոյրը կը բացուի...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՂՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՀ.119.105)

ԺԸ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՐՏ 2025

ԹԻԻ 11

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՀՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 54.11-55.13: Բ. Կր. 6.1-7.1: Ղկ. 15.1-32

ՅԻՍՈՒՍ ԵՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 15.1-32

Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. *“Հայր, քու ստացուածքդ ինձի ինկող բաժինը հիմա տուր ինձի”*: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Զանի մը օր ետք կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ, որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անկէկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. *«Հօրս տան մէջ քանի՞ գործատրներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.- Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս նկատէ՛ քու գործատրներդ մէկը»*: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գնաց վազելով դիմաւորեց զայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. *«Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»*: Հայրը իր ծառաներուն հրամայեց. *«Անմիջապէս քերէք լաւագոյն պատմունանք եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ եւ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»*: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ, երեց զաւակը ազարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց, թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. *«Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց»*: Երեց զաւակը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց, որ ներս մտնէ:

Իսկ ան պատասխանեց. *«Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ, որեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ու մը չտուիր ինձի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»*:

Հայրը ըսաւ. *«Տղաս, դուն միշտ ինձի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»*:


ՃՐԱԳ ՇԱՔԱԹԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ -

Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ

ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քինյ. Սարգիսեան

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԿԻՐԻՆՆԱԿԱՅԻՆ ՀԱՅՐԱՊԵՏ



Վարդապետ եկեղեցւոյ, ծնաւ 315-ին Երուսաղեմի մօտերը, քահանայ ձեռնադրուեցաւ 345-ին, պատրիարք ընտրուեցաւ 350-ին: Իր առաքինակրօն կեանքին եւ իմաստութեան համար սիրելի դարձած էր ուղղափառներուն եւ նոյնիսկ չարափառներուն, այսինքն՝ արիոսեանց: Բայց պատրիարքական աթոռ ելլելէ առաջ, երբ ըմբերանց այս վերջինները, անոնք հակառակութեամբ լեցուեցան իր դէմ: Այն հակառակութեան հետեւանքովն էր, որ անգամ մը գահընկեց եղաւ, եւ յետոյ նորէն դարձաւ Երուսաղեմ, Յուլիանոս Ուրացոյի ատեն, որուն հրէից Տաճարը վերաշինելու անմիտ ձեռնարկին ականատես իսկ եղաւ: Արիոսականները յաջողեցան վերստին ձգել զինքը իր Աթոռէն, որուն վրայ վերջապէս վերահաստատեց յետոյ զինքը Կ. Պոլսոյ ժողովը: Իր օրով տեղի ունեցաւ Ս. Խաչին հրաշալի երեւումը Երուսաղեմի մէջ, որուն համար ծանուցանող նամակ մը ուղղեց Կոստանդ կայսեր:

Իր հոգեւոր գործունէութեան ամէն փայլուն եւ արդիւնաւոր կողմերէն մին եղաւ ի քրիստոնէութիւն դարձը բազմաթիւ հեթանոսներու, որոնք իր ձեռքէն կ'ընդունէին քրիստոնէութիւնը:

Այս առթիւ խօսած իր քարոզները, որոնք քրիստոնէական վարդապետութեան սփռելի սկզբունքները կը պարունակեն, մեծ մասամբ ամփոփուած են «Կոչումն ընծայութեան» հատորին մէջ, որ ոսկեդարեան թարգմանութեամբ վերածուած է հայերէնի: Թարգմանուած է նոյնպէս Կոստանդ կայսեր ուղղած իր նամակը: Իսկ աւանդութիւնը Երուսաղեմի Ս. Յակոբեանց եկեղեցիի Ս. Ստեփանոս մատրան մէջ կը ցուցնէ աւագանը, որուն մէջ Ս. Կիլիքի մկրտած էր երախայից բազմութիւն մը:

ՀԱՅՐԵՐԸ Կ'ԸՍԵՆ. ՊԱՇՏՈՂԱՆԻԹԻՒՆԸ՝

Պահեցողութիւնը շղթայի մը նման ամուր կը դարձնէ եւ կը պահէ բարոյական բոլոր առաքինութիւններն ու հաւատքի զօրութիւնը: Ան թշնամիին դէմ հպօր աշտարակ մըն է ու սատանայի բոլոր նետերուն դէմ ամուր պարիսպ մը:

Միայն ուտելիքներէ պակասելով է, որ պահք կը կոչուի, այլ նաեւ՝ բոլոր տեսակի մեղքերէ մաքրուիլը: Պահք է նաեւ չխօսիլը՝ մանաւանդ երբ հարցում մը ուղղուած է կամ կարիքը պահանջուած է խօսելու: Պահք է չբաւորութիւնը, աղքատութիւնը, աւելորդ ինչքերով չմտահոգուիլը, միայն օրուան կարիքները հոգալը եւ նոյն բաները Աստուծոյ խնդրելը: Պահք է խոնարհութիւնը, հնազանդութիւնը եւ մաքուր սրտով բոլորը սիրելը:

ՅՈՒՆԱՆ ՍԱՆՏԱԿՈՒՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԽՈՍՏՈՎԱՆԻՔ ՈՐ ԲԱՆ ՄԸ ՉՈՒՆԻՔ ՈՐՊԵՍՉԻ ՏԵՐԸ ՄԵՉԻ ԲԱՆ ՄԸ ՏԱՅ

Աշակերտները հաստատելէ ետք որ ուտելիք բան մը չունին՝ այն ատեն միայն Տէրը օրհնեց վիրենք առատապէս, անոնց շնորհելով մեծ ձուկեր: Կարելի է հոգեւոր հայեացքով մօտենալ այս կէտին: Եթէ երբեք աշակերտները նիւթական ուտելիք չկրցան ունենալ առանց Տիրոջ միջամտութեան, որքա՛ն աւելի դժուար էր իրենց համար հոգեւոր ուտելիք ունենալ, անով կշտանալու եւ ուրիշներն ալ կշտացնելու համար:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Պէտք է աշակերտներուն նման, խոստովանինք Տէր Յիսուսի ներկայութեան, թէ ուտելիք բան մը չունինք, թէ չունինք անհրաժեշտ այն հոգեւոր հացը որով կրնանք յագեցնալ եւ յագեցնել հոգեւորապէս անօթիները: Երբ խոստովանինք՝ այն ատեն միայն Տէրը մեր սիրտերը կեանքի Հացով լեցուն տապանակի պիտի վերածէ: Երբ խոստովանինք, որ Տիրոջ Խօսքին լեցունութիւնը չունինք, այն ատեն, Տէրը մեր հոգիները Աստուծոյ կենսատու Խօսքին մանանայով լեցուն սկիհի պիտի փոխակերպէ:

Ով Տէր դուն ես մեր հարստութիւնը եւ կեանքը: Մենք Քեզի կը վստահինք միշտ պօրացուր մեզի եւ քաջութիւնը տուր ընդունելու եւ խոստովանելու մեր սխալները:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ...

ԵՐԲ ԱՇԽԱՐՀԻ ԽՈՒՈՎ ՎԻՃԱԿԸ ԿԸ ՎՐԱՈՎԷ ՔԵՉ, ԵՒ Կ'ՈՒՋԵՍ ԳԻՏԱԿԸ ԹԷ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱՎԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԲԵՐԷ ԱՇԽԱՐՀԻ Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 85

Բարեհաճութիւնդ ցոյց տուիր քու երկրիդ Տէ՛ր, եւ քու գերեալ ժողովուրդդ վերադարձուցիր: Ժողովուրդիդ անօրէնութիւնը ներեցիր, անոր բոլոր մեղքերը ներեցիր, ահեղ վայրոյթդ սանձեցիր:

Վերադարձի՛ր մեզի, ո՛վ մեր փրկիչ Աստուածը, եւ քու սաստիկ բարկութիւնդ հեռացո՛ւր մեզմէ: Մեզմէ յախտեան բարկացա՞ծ պիտի մնաս, բարկութիւնդ տեսեալա՞ն պիտի ըլլայ: Մեզի նոր կեանք պիտի չտա՞ս որպէսզի քեզմո՛վ ժողովուրդդ ուրախանայ: Մեզի հանդէպ ողորմութիւնդ ցոյց տուր, Տէ՛ր, եւ փրկութիւնդ տուր մեզի:

Ես կը լսեմ որ Տէր Աստուած կ'ըսէ. անիկա խաղաղութիւն կը խոստանայ իր ժողովուրդին, մեզի՛ որ իրեն հաւատարիմ ենք, եւ անոնց՝ որոնք սրտով իրեն դարձած են: Վստահաբար Աստուծոյ փրկութիւնը մօտ է իրմէ ակնածողներուն, որպէսզի իր փառքը մեր երկրին բնակի:

Սէրն ու հաւատարմութիւնը իրարու պիտի հանդիպին, արդարութիւնն ու խաղաղութիւնը պիտի համբուրուին: Հաւատարմութիւնը երկրէն պիտի բուսնի, արդարութիւնը երկինքէն պիտի պարգեւուի: Այո՛, Տէրը իր բարիքը պիտի տայ, եւ մեր երկիրը իր բերքը պիտի տայ: Արդարութիւնը Տիրոջ առջեւէն պիտի երթայ, եւ անոր համար ճամբայ պիտի բանայ: